Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

243
V-47

1888

№ 12

ՀԱՄԱՌՕՏ ԱՂՕԹԱԳԻՐՔ

66

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԳՆԴԱՊԵՏ ԱՂԷՔՍԱՆԴՐ ՄԵԼԻՔ-ՀԱՅԿԱԶԵԱՆՑԻ

Զրի բաժանելի

ԹԻՖԼԻԶ 1888

Տպարան Մովսես Վարդանեանցի

На память К... собранія книгъ

243
Մ-97

ՀԱՄԱՌՕՏ ԱՂՕԹԱԳԻՐՔ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԳՆԴԱՊԵՏ ԱԼԷՔՍԱՆԴՐ
ՄԵԼԻՔ-ՀԱՅԿԱԶԵԱՆՑԻ

Զրի բաժանելի

ԹԻՖԼԻԶ 1888
Տպարան Մովսէս Վարդանեանի

ԱՀ

Дозволено Ценз. 23 Сентября, 1888 Тифлисъ.
Тип. М. Вартанянца, Тройц. пер. д. № 11

1145-ԱՀ

Հայկական ՍՍՀ Գրքերի Գլ. Գրադարան
ՀՍՍՌ-Арм. ССР
Ս. անվ. Ա. Մյասնիկյանի անվան

29963-Ա.Հ.

12623-58

ԲԱՐԵՀԱՃ ՀԱՒԱՆՈՒԹԵԱՄԲ

Տ. Տ. ՄԱԿԱՐԱՅ Ա.

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

На память НОЗ ПЕЛАТУ
сборного пункта.



Գոս. Գրադարան
ՀՍՍՌ-Ում ԳՍՓ

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ·

Աղօթագիրքը երկու մասն է բաժանուած·

Առաջին մասում զետեղուած են Տէրունական աղօթքը, Տասնաբանեայ պատգամը եւ Նիկիական Հանգանակը, նոյնպէս եւ Հայոց եկեղեցւոյ Դաւանանքը եւ Հայ-քրիստոնէի Զղջումը:

Վերին երեքը դրուած են բառացի թարգմանութեամբ եւ բացատրութեամբ:

Զինուորական Օրինագրքի համաձայն ամէն զինուոր պէտք է սովորի վերի երեքը, իսկ վերջին երկուսը՝ այն է՝ Հայ եկեղեցու Դաւանանքը եւ Զղջումը ամէն հայի պարտականութիւնն է գիտենալ եւ հասկանալ:

Երկրորդ մասը պարունակում է իւր մէջ իւրաքանչիւր քրիստոնէի օրուայ որոշեալ ժամերում նոյնպէս եւ զանազան դէպքերում անելիք աղօթքը:

Վերջումն աւելացրած են հանդիսաւոր տօների ԺԱՄԱՄՈՒՏՆԵՐԸ, որ գինուորները սովորաբար երգում են:

Թարգմանութիւնները եւ բացատրութիւններն աշխարհաբառ գրուած են գինուորներին հասկանալի եւ մատչելի անելու համար միայն, ինչ վերաբերում է աղօթքներին՝ անպատճառ պէտք է ասել գրաբառ:

ՏԷՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՕԹՔ.

Հայր մեր որ յերկինս եւ. սուրբ եղիցի անուն քո։ Եկեսցէ արքայութիւն քո. եղիցին կամք քո որպէս յերկինս եւ յերկրի։ Զհաց մեր հանապազորդ՝ տուր մեզ այսօր։ Եւ թող մեզ զպարտիս մեր, որպէս եւ մեք թողումք մերոց պարտապանաց։ Եւ մի տանիր զմեզ ի փորձութիւն, այլ փրկեա՛ զմեզ ի չարէ։ Զի քո է արքայութիւն եւ զօրութիւն եւ փառք յաւիտեանս. ամէն։

Այս աղօթքը նորա համար ենք կոչում Տէրունական, որովհետեւ ինքը մեր Տէր Յիսուս Քրիստոսը սովորցրեց իւր աշակերտներին։

Տէրունական աղօթքի բացատրութիւնն այս է.

Մեր երկնաւոր հայր, քո անունդ միշտ սուրբ լինի. դու մեզ այնպիսի կարողութիւն տուր, որ մենք քո անունդ սուրբ պահենք քեզ չը ճանաչողների եւ անհաւատների մէջ, որպէս զի նրանք էլ օրհնութեամբ եւ ջերմեռանդութեամբ փառաւորեն քեզ։

Դու ինքդ թագաւորիր մեր սրտի մէջ, որ մենք կարողանանք բարի գործերով եւ առաքինի վարքով արժանի լինելը քո սուրբ արքայութեանը։

Մեզ կարողութիւն տուր, որ քո սուրբ կամքն այնպէս կատարենք այս

աշխարհումն, ինչպէս որ հրեշտակներն երկնքումն անթերի կատարում են։

Մեր օրական պիտոյքը՝ ինչ որ այս աշխարհիս վերայ ապրելու համար մեզ հարկաւոր է, այսօր էլ տուր մեզ։

Մեզ կարողութիւն տուր ներել մեր ընկերների մեզ դէմ գործած յանցանքը, որ դու էլ մեր մեղքը ներես, որովհետեւ եթէ մենք միմեանց մեղքերը չենք ներիլ, դու էլ մեզ չես ներիլ։

Մեզ այնպիսի փորձութիւնների մէջ մի ձգիլ, որ ոյժ չունենանք փախչել եւ մոլորուինք, բայց եթէ մեզ պատահի գայթակղութեան մէջ ընկնել, դու ինքդ մեզ ազատիր այնպիսի փորձանքներից։

Իսկ այս ամէնը քեզանից ենք խնդրում, երկնաւոր հայր, որովհետեւ դու ինքդ ես մեր ամէնքիս սրտի թագաւորը, քեզ է պատկանում երկնային թագաւորութիւնը, ինքդ ունիս զօրութիւն բոլոր մեր խնդրուածքները կատարելու եւ քեզ է պատկանում յաւիտենական փառքը։

ՏԱՍՆԱԲԱՆԵԱՅ ՊԱՏԳԱՄՔԸ.

Ա. Ես եմ Տէր Աստուած քո, մի՛ եղիցին քեզ այլ աստուածք բաց յինէն։

(Նշանակում է. Ես եմ քո տէր Աստուածը, բացի ինձանից ուրիշ աստուածներ չունենաս)։

Այս առաջին պատուիրանքով Աստուած մեզ հրամայում է սիրել եւ պաշտել միայն իրեն, որովհետեւ ինքն է ճշմարիտ Աստուածը, երկնքի եւ երկրի ստեղծողը, պատուիրում է իրանից աւելի ուրիշներին Աստուծոյ տեղ չը պաշտել։

Բ. Մի՛ տրասցես դու քեզ կուռս ըստ ամենայն նմանութեան, որ ինչ յերկինս 'ի վեր է եւ որ ինչ յերկիր 'ի խոնարհ եւ որ ինչ 'ի ջուրս 'ի ներքոյ երկրի, մի՛ երկիրպագանիցես նոցա եւ մի պաշտեսցես զնոսա։

(Այսինքն՝ Դու քեզ համար կուռք չը շինես այն արարածների նման, ինչ որ վերեւը երկնքումը՝ ցածումը՝ երկրումը եւ ջրերի մէջ գտնուում են, նրանց երկրպագութիւն չը տաս ու չը պաշտես)։

Երկրորդ պատուիրանքով Աստուած մեզ հրամայում է ձեռագործ արարածներին՝ թէ երկնքի լուսաւորներին, երկրի վերայ եղած կենդանի եւ անկենդան արարածներին եւ թէ ջրային կենդանիներին երկրպագութիւն չը տալ, կուռք չը շինել եւ չը պաշտել։

Կուռք է համարուում այն էլ, եթէ մարդ իւր խելք ու միտքը դնում է փող եւ հարստութիւն ժողովելու վերայ ամէն ներելի եւ անները մի միջոցներով եւ ժլատութիւնից իւր հարստութիւնը բարի գործերի վրայ չէ գործածում։

Գ. Մի՛ առնուցուս զանուն Տեառն Աստուծոյ քո՝ ի վերայ անոտեաց։

(Այսինքն՝ քո Տէր Աստուծոյ անունը ունայն բաների վերայ մի դնիր։)

Երրորդ պատուիրանքով մեզ արգելուում է շուտ շուտ՝ ի զուր տեղը Աստուծոյ անունը սուտ երդումներով առանց երկիւղածութեան չը կրկնել, ոչ միայն սուտ չերդուել նորա անունով, այլ եւ աշխատել, որքան կարելի է, ճշմարիտ եղած ժամանակն էլ Աստուծոյ անունով չ՚երդուել, իսկ եթէ պատահի, որ օրէնքը մեզ ստիպէ երդուել, այնժամանակ միայն մենք պէտք է ամենայն ջերմեռանդութեամբ Աստուծոյ անունը տանք եւ եւ ճշմարիտ վկայենք։

Դ. Յիշեսջիր զօրն շաբաթուց սրբել զնա, զվեց օր գործեսցես եւ

արասցես զամենայն գործս քո, յաւուրն եօթներորդի շաբաթ Տեառն Աստուծոյ քում։

(Այսինքն՝ միտքդ բեր շաբաթ օրերը սուրբ պահել, վեց օր զործիր եւ կատարիր քո բոլոր զործերդ, իսկ եօթներորդ օրը, որ շաբաթ օրն է, նուիրիր քո Տէր Աստծոյն։)

Աստուած ինքը թէպէտ մի խօսքով ստեղծեց այս աշխարհս, բայց մեզ օրինակ տալու համար վեց օրուայ մէջ բոլոր արարածների ստեղծագործութիւնը կարգի բերեց, իսկ եօթներորդ օրն, ինչպէս Սուրբ գիրքն ասում է, հանգստացաւ իւր բոլոր գործերից։ Սորանով Աստուած մեզ պատուիրում է վեց օր աշխատել, մեր աշխարհային գործերը կատարել,

իսկ եօթներորդ օրը, որ յառաջ շաբաթն էր, իսկ 'ի պատիւ Քրիստոսի Յարութեան կիւրակէի փոխուեցաւ, պարապել միմիայն բարի գործերով, աղօթք անել եւ Աստծոյն իրեն նուիրել։

Ե. Պատուեա զհայրդ քո եւ զմայրդ, զի քեզ բարի լինիցի եւ զի երկայնակեաց լինիցիս 'ի վերայ երկրին բարութեան։

(Այսինքն՝ պատուիր քո հօրն ու մօրդ, որ քեզ բարի լինի եւ այս բարութիւնով լիքն երկրի վերայ երկայն կեանք ունենաս։)

Հինգերորդ պատուիրանքով Աստուած մեզ հրամայում է՝ պատուել ոչ միայն մեր ծնողներին, այլ եւ բոլոր

մեղանից մեծերին, այլ եւ նորանց, որոնք զանազան հանգամանքներով մեր վերայ ծնողական գութ են ունեցել, մեզ խնամք են տարել։ Ծնող է մեզ համար մեր ԹԱԳԱՒՈՐԸ, Որը միշտ մեր բարութեան համար է մտածում; ծնող են մեզ մեր հոգեւոր հայրերը, որոնք մեր հոգւոյ փրկութեան համար հոգս են քաշում; աղօթում են մեր բարեկեցութեան համար, ծնող են մեր դասատիարակները, մեր բարերարները, միով բանիւ նրանք, որ քաղցր աչք ունին մեր վերայ։ Այս պատուիրանքը կատարողին Աստուած խոստանում է երկար կեանք տալ այս աշխարհումն։

Զ. Մի սպանաներ։

(Այսինքն՝ սպանութիւն մի անիլ։)

Այս պատուիրանքով Աստուած արգելում է մեզ ոչ միայն սրով ու զէնքով մարդասպանութիւն չանել, այլ եւ լեզուով չարախօսութիւն չանել մեր ընկերի վերայ, նորա անունը եւ պատիւը չարատաւորել, նորա վարկը չը կոտրել, նորա խաղաղութիւնը չը վրդովել, միով բանիւ փախչել կռուից, նախանձից, ատելութիւնից եւ ամենայն բանից, ինչ որ կարող է մեր ընկերին վնասել. այդ նշանակում է նորան բարոյապէս սպանել։

Բայց եթէ աւազակը, կամ թշնամին կամենում է մեզ սպանել, մենք պէտք է աշխատենք, որքան հնար է, փախուստ տալ նորանից եւ առանց վնաս տալու գլխներս ազատենք, իսկ եթէ հնարք չեղաւ, մեր անձը պաշտպանելու համար մենք մեղանչած չենք

19623-58

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀԱՍՀ-Арм. ССР

լինիլ, եթէ նորան սպանենք։ Նոյնպէս էլ մեր հայրենիքի, մեր եկեղեցու եւ հաւատի թշնամու, մեր երկրի խաղաղութիւնը խանգարողի, մեր երկրի պաշտպան ԹԱԳԱՒՈՐԻ թշնամու դէմ զէնքով կռուելը, պատերազմի մէջ նորան սպանելն ընդդէմ չէ այս վեցերորդ պատուիրանին։

Է. Մի շնար։

(Այսինքն՝ շնութիւն մի անիլ։)

Այս պատուիրանքով մեզ արգելւում է ամենատեսակ անկարգ եւ անվայել կեանք եւ սպօրինի աշխարհային ցանկութիւն եւ սէր. արգելւում է ամենայն բան, ինչ կարող է գայթակղութեան պատճառ դառնալ մեզ՝ հեռուելու աշխարհային կրքերին։

Ը. Մի գողանար։

(Այսինքն՝ գողութիւն մի անիլ։)

Այս պատուիրանքը մեզ հրամայում է ուրիշի սեպհականութիւնը չը յափշտակել բռնութեամբ, անձնական օգտի համար ընկերին չը խաբել եւ նորա բարիքին չը տիրանալ. գողութիւն է համարւում եւ այն՝ եթէ մենք յանձն ենք առնում վարձով մի աշխատանք կատարել եւ խղճմտանքով չենք կատարում։

Թ. Մի սուտ վկայեր զընկերէ քումմէ։

(Այսինքն՝ քո ընկերի մասին սուտ վկայութիւն մի տալ։)

Ինքներորդ պատուիրանքով Աստուած մեզ արգելում է սուտ վկայութիւն տալն օրէնքի եւ դատաւորի յառաջ. արգելում է բամբասանք անելը, չարախօսելը մէկի համար, մատնութիւններ անելը, սուտ խօսել կամ խաբելը: Վերջապէս՝ Աստուած հրամայում է մեզ այս պատուիրանքով ճշմարիտ խօսել եւ ճշմարիտ վկայել տեսածի եւ լսածի համար:

Դ. Մի ցանկանար տան ընկերի քո եւ մի անգոյ նորա, մի ցանկանար կնոջ ընկերի քո, մի ծառայի նորա եւ մի աղախնոյ նորա եւ մի եզին նորա եւ մի իշոյ նորա եւ մի ամենայն անասնոց նորա եւ մի ամենայնի՝ զինչ ընկերի քո իցէ:

(Այսինքն՝ քո ընկերի տան ու հանդի վերայ աչք ու ցանկութիւն պէտք է չունենաս, նորա կնոջը, նորա ծառային, աղախնուն, եզին, իշին, բոլոր անասունների՝ միով բանիւ ընկերիդ ունեցած չունեցածին մի՛ ցանկանայ:)

Այս պատուիրանքով Աստուած մեզ հրամայում է ոչ միայն վատ բան չը գործել, ոչ միայն ուրիշի տան, կնոջ եւ ամենայն ունեցածի վերայ աչք չունենալ, այլ եւ նորան ամենատեսակ վատութիւն եւս չը ցանկանալ, հեռու փախչել ամենայն չար ցանկութիւններից, ինչ որ մեզ կարող է տանել դէպի մոլորութիւն:

ՀԱՆԳԱՆԱԿ ՆԻԿԻԱԿԱՆ.

Հաւատամք ի մի Աստուած՝ 'ի Հայրն ամենակալ՝ յարարիչն երկնի եւ երկրի, երեւելեաց եւ անտեսանելեաց։

Եւ ի մի Տէր Յիսուս Քրիստոս Որդին Աստուծոյ՝ ծնեալն յԱստուծոյ Հօրէ՝ միածին, այսինքն յէութենէ Հօր։ Աստուած յԱստուծոյ, լոյս 'ի լուսոյ, Աստուած ճշմարիտ, յԱստուծոյ ճշմարտէ՝ ծնունդ եւ ոչ ստեղծեալ։ Նոյն ինքն ի բնութենէ Հօր, որով ամենայն ինչ եղեւ յերկինս եւ ի վերայ երկրի, երեւելիք եւ անտեսանելիք։ Որ յաղագս մեր մարդկան եւ վասն մերոյ փրկութեան իջեալ ի յերկնից՝ մարմնացաւ, մարդացաւ, ծնաւ կատարելապէս ի Մարիամայ սրբոյ կուսէն Հոգւովն սրբով։ Որով

էառ զմարմին, զհոգի եւ զմիտս եւ զամենայն որ ինչ է ի մարդ. ճշմարտապէս եւ ոչ կարծեօք։ Չարչարեալ, խաչեալ, թաղեալ, յերրորդ աւուր յարուցեալ, ելեալ ի յերկինս նովին մարմնովն նստաւ ընդ աջմէ Հօր։ Գալոց է նովին մարմնովն եւ վասն օր Հօր ի դատել զկենդանիս եւ զմեռեալս, որոյ թագաւորութեան ոչ գոյ վախճան։ Հաւատամք եւ ի սուրբ Հոգին՝ յանեղն եւ 'ի կատարեալն, որ խօսեցաւ յօրէնս եւ ի մարգարէս եւ յաւետարանս։ Որ էջն ի Յորդանան, քարոզեաց զառաքեալն, եւ բնակեցաւ ի սուրբսն։ Հաւատամք եւ ի մի միայն ընդհանրական եւ յառաքելական եկեղեցի, մի մկրտութիւն, յապաշխարութիւն, ի քաւութիւն եւ ի թողութիւն մեղաց։ Ի յարութիւնն մեռելոց,

ի դատաստանն յաւիտենից հոգւոց եւ մարմնոց, յարքայութիւնն երկնից եւ ի կեանսն յաւիտենականս:

Իսկ որք ասեն՝ էր երբեմն, յորժամ ոչ էր Որդի. կամ էր երբեմն՝ յորժամ ոչ էր սուրբ Հոգի. կամ թէ յոչէից եղեն, կամ յայլմէ էութենէ ասեն լինել զՈրդին Աստուծոյ եւ կամ զսուրբ Հոգին. եւ թէ փոփոխելիք են կամ այլայլելիք, զայնպիսիսն նզովէ կաթուղիկէ եւ առաքելական եկեղեցի:

Իսկ մեք փառաւորեսցուք՝ որ յառաջքան զյաւիտեանս, երկիրպագանելով սրբոյ Երրորդութեանն եւ միոյ աստուածութեանն հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ՀԱՆԳԱՆԱԿԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆԸ.

Հաւատում ենք երկնքի եւ երկրի երեւելի եւ աներեւոյթ արարածներին ստեղծող ամենակարող միակ Հայր Աստծոյն:

Հաւատում ենք Աստուծոյ որդի միակ տէր Յիսուս Քրիստոսին, որ նա ծնել է այր Աստծուց, ինքը միածին է, այսինքն Հօր բնութիւնից է: Աստուած է՝ Աստուածանից ծնած, լոյս է՝ լուսից յառաջ եկած, ինքը ճշմարիտ Աստուած է, ճշմարիտ Աստուածանից ծնած եւ ոչ թէ արարած:

Նա ինքը Հօր բնութիւնից է, նորանով եղան երկնքի եւ երկրի վերայի բոլոր երեւելի եւ աներեւոյթ արարածները: Նա մեզ մարդկանցս փրկելու համար երկնքից իջաւ, մարմին առաւ, մարդ դարձաւ եւ սուրբ Հոգւով կատարելապես ծնաւ սուրբ կոյս Մարիամից: Նորանով առաւ մարմին, հոգի, միտք

եւ ամենայն՝ ինչ որ մարդն մէջ գըտնուում է, ճշմարտութեամբ եւ ոչ թէ կարծիքով: Զարչարուեց, խաչուեց, թաղուեց, երրորդ օրն յարութիւն առաւ, նոյն մարմնովը բարձրացաւ երկինքն եւ նըստեց ձեռ աջակողմը: Նոյն մարմնովը եւ Հոր փառքովը նա նորից պէտք է գայ կենդանիներին եւ մեռելներին դատելու: Նորա թագաւորութեանը վերջ չըկայ:

Հաւատում ենք անեղ եւ կատարեալ սուրբ Հոգւոյն, որ խօսեց օրէնքների եւ մարգարէների եւ առաքելաների մէջ, որ իջաւ Յորդանանումը, վկայեց Հօրից ուղարկուած որդու մասին եւ սրբերի մէջ բնակուեցաւ:

Հաւատում ենք մի, ընդհանրական եւ առաքելական եկեղեցւոյն, մի մըկրտութեանը եւ մեղաց թողութեան համար եղած ապաշխարութեանը:

Հաւատում ենք մեռելների յարութեանը, յաւիտենական դատաստանին,

որ յինելու է հոգիներին եւ մարմիններին, երկնքի արքայութեանը եւ յաւիտենական կեանքին:

Իսկ նոքա, որոնք ասում են, թէ մի ժամանակ Որդին չըկար, կամ մի ժամանակ Հոգին չըկար, կամ թէ ոչնչից գոյացան, կամ թէ Աստուածորդին եւ սուրբ Հոգին ուրիշից են յառաջ եկել եւ թէ նոքա փոփոխական են եւ այլայլուողներ, այնպիսի մարդկանցն ընդհանրական եւ առաքելական եկեղեցին նզովում է:

Իսկ մենք փառաբանենք նորան, որ յաւիտենական ժամանակիցն յառաջ էր եւ երկրպագութիւն տանք սուրբ Երրորդութեանն եւ մի Աստուածութեանն Հօր եւ Որդւոյ եւ Սուրբ Հոգւոյն այժմ եւ յաւիտեանս՝ միշտ եւ հանապազ. ամէն:

Հաւատոյ Հանգանակը մեզ սովորցնում է համառօտ կերպիւ այն ամենայն ճշմարտութիւններն, ինչ որ քրիստոնեայք պարտական են հաւատալ։

Հանգանակը հաստատեցին Նիկիա քաղաքումը 318 հայրապետներ՝ Քրիստոսի 325 թուականին։ Այն ժողովքի մէջ մեր կողմից մասնակցում էր մեր սուրբ Լուսաւորչի որդի Արիստակէս հայրապետը, նա երբ հանգանակը բերեց Հայաստան, մեր Լուսաւորիչն իւր կողմից աւելացրեց դաւանութեան հաստատութիւնն այս խօսքերով՝

Իսկ մեք փառաւորեսցուք եւ այլն։

Հանգանակի բացատրութիւնն այս է՝ Հաւատում ենք՝ այսինքն

թէպէտ աչքով չենք տեսնում, բայց սրտով խոստովանում ենք, որ Աստուած մի է գոյութեամբ եւ երեք անձնաւորութիւն է, թէ սուրբ Երրորդութեան առաջին անձնաւորութիւնը Հայրն է, որ ստեղծել է ամենայն երեւելի արարածներին՝ երկիրս, արեւը, լուսինը, աստղերը, մարդկանցը, անասուններին եւ այլն, նոյնպէս եւ աներեւոյթ արարածներին՝ հրեշտակներին եւ մարդու հոգին։

Հաւատում ենք, որ Յիսուս Քրիստոս Հայր Աստուծոյ միածին որդին է, հօրից է ծնած, հօր գոյութիւնից է, ինքը Աստուած է՝ Աստուածանից ծնած, ինչպէս որ լոյսը լուսից է լինում։ Նա ինքն էլ նոյնպէս յաւիտենական է, ինքն է

ստեղծել երկնքի եւ երկրի վրայի բոլոր արարածներին, նա սուրբ Երրորդութեան երկրորդ անձնաւորութիւնն է։

Նա մեր մեղքը ջնջելու եւ մեզ փրկելու համար երկնքից իջաւ, մարմին առաւ, մեզ նման մարդ դարձաւ եւ սուրբ Հոգւով կատարելապէս ծնաւ սուրբ կոյս Մարիամից եւ կատարեալ մարդ լինելով՝ մարդկային բնութիւն ստացաւ եւ այս բոլոր աստծներս միանգամայն ճշմարիտ է եւ երկմտելու ոչինչ չկայ։ Նա չարչարուեցաւ Հրէաների ձեռքով, խաչուեց, թաղուեց եւ երրորդ օրն յարութիւն առնելով՝ բարձրացաւ երկինքն ու Հօր աջ կողմը նստեց՝ այսինքն մարմնով ըստացաւ այն զօրութիւնն եւ փառքն,

որ ըստ աստուածութեան ունէր յառաջագոյն։

Հաւատում ենք, որ նա նորից պէտք է գայ միեւնոյն մարմնով եւ Աստուածային փառքով եւ բոլոր մարդկանց՝ թէ կենդանիներին եւ թէ մեռելներին՝ Ադամից սկսած՝ արդար դատաստան պէտք է անի. այդ օրից կսկսի նորա անվերջ թագաւորութիւնը։

Հաւատում ենք, որ սուրբ Հոգին, էլ, որ սուրբ Երրորդութեան երրորդ անձնաւորութիւնն է, նոյնպէս կատարեալ Աստուած է, ոչ ոքից չէ ստեղծուած, նա ինքն էր, որ բոլոր մարգարէներին շնորհ տուեց աւետիք տալ Յիսուս Քրիստոսի գալստեան եւ հոգիների փրկութեան մասին, նորա զօրութեամբը

գրուեցան օրէնքները, նա աղաւ-
նակերպ իջաւ Յորդանան գետի վե-
րայ Յիսուս Քրիստոսի մկրտութեան
ժամանակ եւ վկայեց, որ նա է
Հայր Աստուծոյ սիրելի որդին։

Հաւատում ենք, որ Յիսուս Քրիս-
տոսի եկեղեցին, որ առաքեալները
հաստատեցին եւ բոլոր աշխարհումը
տարածուած է ամէն ազգերի՝ մէջ,
մի է, ինչպէս որ ինքն Աստուածը
մի է։

Հաւատում ենք, որ Յիսուս
Քրիստոսի պատուէրին համաձայն
ամենայն քրիստոնեայ պէտք է իւր
կեանքում միայն մի անգամ մկրտ-
ուի՝ սկզբնական ադամային մեղքից
սրբուելու համար, իսկ նոր մեղքերի
համար նա պէտք է ապաշխարի եւ
զղջայ։

Հաւատում ենք, որ մի օր բո-
լոր մեռելները պէտք է յարութիւն
առնեն, ինքը Յիսուս Քրիստոսը պէտք
է գայ մարդկային մարմնով եւ հայրա-
կան փառքով, ամէն մարդու իւր
գործի համաձայն պէտք է դատի
եւ այնուհետեւ բոլոր արդարները
պէտք է ժառանգեն յաւիտենական
կեանքն եւ արժանանան երկնային
թագաւորութեանը։

Բայց այն մարդիկը, որոնք
Աստուած որդուն եւ սուրբ Հոգոյն
արարած են համարում եւ ուրա-
նում են աստուածութիւնը, այն-
պիսիներին մեր կաթուղիկէ եւ ա-
ռաքելական սուրբ եկեղեցին նզո-
վում է։

ՀԱՅՈՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑՈՒ ԴԱՒԱՆԱՆՔԸ.

Խոստովանիմք եւ հաւատամք ամենակատար սրտիւ զՀայրն աստուած՝ անեղ, անծին եւ անսկիզբն. այլեւ ծնող Որդւոյ եւ բղխող Հոգւոյն սրբոյ։

Հաւատամք զԲանն աստուած, անեղ՝ ծնեալ՝ եւ սկսեալ ի Հօրէ նախ քան զյաւիտեանս. ոչ յեղոյ եւ ոչ կրտսեր. այլ որքան Հայրն Հայր՝ ընդ նմին եւ Որդին՝ որդի։

Հաւատամք զսուրբ Հոգին աստուած՝ անեղ. անժամանակ. ոչ ծընեալ՝ այլ բղխեալ ի Հօրէ. էակից Հօր եւ փառակից Որդւոյ։

Հաւատամք զԵրրորդութիւնն սուրբ, մի բնութիւն, մի աստուածութիւն. ոչ երեք աստուածք, այլ՝ մի Աստուած, մի կամք, մի թագաւորութիւն, մի իշխանութիւն. արարիչ երեւելեաց եւ անտեսանելեաց։

Հաւատամք յԵկեղեցի սուրբ՝ զթողութիւն մեղաց՝ հաղորդութեամբ սրբոց։

Հաւատամք զմիին յերից անձանց զԲանն աստուած՝ ծնեալ ի Հօրէ նախ քան զյաւիտեանս. ի ժամանակի իջեալ յաստուածածին կոյսն Մարիամ. առեալ յարենէ նորա՝ միաւորեաց ընդ իւրում աստուածութեանն. ինն ամսեայ ժուժկալեալ յարգանդի անարատ կուսին. եւ եղեւ աստուածն կատարեալ՝ մարդ կատարեալ, հոգւով, եւ մտօք եւ մարմնով. մի անձն, մի դէմ, եւ միաւորեալ մի բնութիւն։ Աստուածն

մարդացեալ առանց փոփոխման եւ առանց այլայլութեան. անսերմն յըղութիւն եւ անապական ծնունդ. որպէս ոչ է սկիզբն աստուածութեան նորա՝ եւ ոչ վախճան մարդկութեան նորա։ (Զի Յիսուս Քրիստոս երէկ եւ այսօր՝ նոյն եւ յաւիտեան)։

Հաւատամք զտէրն մեր Յիսուս Քրիստոս շրջեալ ի վերայ երկրի. յետ երեսուն ամաց եկեալ ի մկրտութիւն։ Հայր ի վերուստ վկայեալ՝ Դա՛ է որդի իմ՝ սիրելի. եւ Հոգին սուրբ աղաւնակերպ իջեալ ի վերայ նորա։ Փորձեալ ի սատանայէ եւ յաղթեալ նմա։ Քարոզեալ մարդկան զփրկութիւն։ Աշխատեալ մարմնով, վաստակեալ՝ քաղցեալ՝ եւ ծարաւեալ։ Յետոյ եկեալ կամաւ ի չարչարանս. խաչեալ եւ մեռեալ մարմնովն,

եւ կենդանի աստուածութեամբն։ Մարմինն եղեալ ի գերեզմանի՝ միաւորեալ աստուածութեամբն, եւ հոգւովն իջեալ ի դժոխս՝ անբաժանելի աստուածութեամբն։ Քարոզեալ հոգւոցն՝ աւերեալ զդժոխս՝ եւ ազատեալ զհոգիսն։ Յետ երից աւուրց յարուցեալ ի մեռելոց եւ երեւեալ աշակերտացն։ Հաւատամք զտէրն մեր Յիսուս Քրիստոս՝ նովին մարմնովն համբարձեալ յերկինս եւ նըստեալ ընդ աջմէ Հօր։ Այլեւ գալոց է նովին մարմնովն եւ փառօք Հօր ի դատել զկենդանիս եւ զմեռեալս։ Որ եւ յարութիւն ամենայն մարդկան։ Հաւատամք եւ զհատուցումն գործոց. արդարոցն կեանք յաւիտենական, եւ մեղաւորացն տանջանք յաւիտենական։

ԽՈՍՏՈՎԱՆՈՂ ՀԱՅ ՔՐԻՍՏՈՆԷԻ ՁՂՋՈՒՄԸ.

Մեղայ ամենասուրբ Երրորդութեանն՝ Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ։ Մեղուցեալ եմ Աստուծոյ։ Խոստովանիմ առաջի Աստուծոյ՝ եւ սրբուհւոյ աստուածածնին, եւ առաջի քո, հայր սուրբ՝ զամենայն մեղս, զոր գործեալ եմ։ Քանզի մեղայ խորհրդով, բանիւ եւ գործով. կամայ եւ ակամայ, գիտութեամբ եւ անգիտութեամբ. մեղայ Աստուծոյ։

Մեղայ հոգւովս եւ զօրութեամբ սորա. մտօքս եւ շարժմամբ սորա. մարմնովս եւ զգայութեամբ սորա։ Մեղայ զօրութեամբ հոգւոյս. խորամանկութեամբ, անզգամութեամբ,

յանդգնութեամբ. եւ երկչոտութեամբ, շռայլութեամբ, ժլատութեամբ, զեղխութեամբ, անիրաւութեամբ, չարահաւանութեամբ, յուսահատութեամբ, եւ թերամտութեամբ. մեղայ Աստուծոյ։

Ս. յլ եւ մեղայ եօթնիւսս յանցանօք՝ մահացու մեղօք. հպարտութեամբ՝ եւ մասամբք նորին. նախանձու՝ եւ մասամբք նորին. բարկութեամբ եւ մասամբք նորին. ծուլութեամբ եւ մասամբք նորին. որկրամոլութեամբ եւ մասամբք նորին. մեղայ Աստուծոյ։

Ս. յլ եւ մեղայ ամենայն պատուիրանացն Աստուծոյ. յանձնառելեացն եւ հրաժարելեացն. զի ոչ զյանձնառականսն կատարեցի եւ ոչ ի հրաժարելեացն հեռացայ։ Զօրէնս առի՝

եւ յօրինացն հեղգացայ. ի կարգս քրիստոնէութեան հրաւիրեցայ՝ եւ գործովս անարժան գտայ. գիտելով զչարն՝ կամաւ կուրացայ, եւ ի բարեաց գործոց ես ինձէն հեռացայ. վայ ինձ, վայ ինձ, վայ ինձ։ Զո՞րն ասեմ, կամ զո՞րն խոստովանիմ. զի անթիւ են յանցանք իմ. անասելի են անօրէնութիւնք իմ. անհերելի են ցաւք իմ. եւ անբժշկելի են վէրք իմ. մեղայ Աստուծոյ։

Հայր սո՛ւրբ, զքեզ ունիմ միջնորդ հաշտութեան եւ բարեխօս առ միածին Որդին Աստուծոյ, զի իշխանութեամբդ, որ տուեալ է քեզ, արձակեսցես զիս ի կապից մեղաց իմոց, աղաչեմ զքեզ։

ԱՌԱՒՕՏԵԱՆ ԱՂՕԹՔ.

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ ամէն։

Տէր, եթէ զշրթունս իմ բանաս, բերան իմ երգեսցէ զօրհնութիւնս քո։

Տէր, եթէ զշրթունս իմ բանաս, բերան իմ երգեսցէ զօրհնութիւնս քո։

Օրհնեալ համագոյ եւ միասնական անբաժանելի սուրբ Երրորդութիւն՝ Հայր եւ Որդի եւ Հոգի սուրբ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Լոյսք առաւօտու ողորմութեամբ քով. ցնծացաք եւ ուրախ եղաք զամենայն աւուրս կենաց մերոց։

Ուրախ եղաք փոխանակ ա-

ուրցն՝ յորս խոնարհ արարեր զմեզ, եւ ամացն՝ յորս տեսաք զչարչարանս։

Հայեա՛ Տէր ի ծառայս քո եւ ի գործս ձեռաց քոց, եւ առաջնորդեա որդւոց նոցա. եղիցի լոյս Տեառն Աստուծոյ ի վերայ մեր։

Զգործս ձեռաց մերոց ուղիղ արա ի մեզ Տէր. եւ զգործս ձեռաց մերոց յաջողեա մեզ։

Փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Գոհանամք զքէն Տէր Աստուած մեր, որ զարթուցեր զմեզ ի հանգստենէ քնոյ շնորհիւ ողորմութեան քո։ Զարթո՛ զմիտս մեր արդարութեամբ առ քեզ Տէր Աստուած մեր, զի տեսցեն աչք մեր զփրկութիւն քո։

Եկեսցէ եւ բնակեսցէ առ մեզ Աստուածութիւն քո եւ ողորմութիւն քո հովանի եւ պահապան լիցի ի վերայ պաշտօնէից քոց։ Եւ զմեզ զծառայքս քո արժանի արա ի տուէ եւ ի գիշերի եւ յամենայն ժամու միշտ խորհիլ իսէր պատուիրանաց քոց։ Եւ գոհանալով փառաւորել զՀայր եւ զՈրդի եւ զսուրբ Հոգիդ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս՝ յաւիտենից ամէն։

Սուրբ Աստուած. սուրբ եւ հզօր. սուրբ եւ անմահ, որ խաչեցար վասն մեր ողորմեա՛ մեզ։ (*)

Աւետեաց, Ծննդեան եւ Թլպատութեան օրերը պէտք է ասել՝

Սուրբ Աստուած . . . որ յայտնեցար վասն մեր ողորմեա՛ մեզ։

Քառասնօրեայ զայստեան եւ Ծաղկազարդին՝

Սուրբ Աստուած. . . որ եկիր եւ գալոց ես. ողորմեա՛ մեզ։

---

*) Այսպէս պէտք է ասել Աւագ ուրբաթ ճաշին, ամենայն տրբոց, եկեղեցւոյ եւ խաչի տօնեարին եւ պահոց օրերը։

Աւագ ուրբաթ գիշերը՝

Սուրբ Աստուած. . . որ մատնեցար վասն մեր. ողոր։

Աւագ ուրբաթ երեկոյին եւ շաբաթ գիշերը՝

Սուրբ Աստուած. . . որ թաղեցար վասն մեր ողորմեա մեզ.

Զատկի եւ ամենայն Յարութեան կիւրակէից՝

Սուրբ Աստուած . . . որ յարեար ի մեռելոց. ողոր. . .

Համբարձմանը՝

Սուրբ Աստուած. . . . որ համբարձար փառօք առ Հայր. ողոր...

Հոգեզալստեանը՝

Սուրբ Աստուած . . . որ երկիր
եւ հանգեալ յառաքեալսն... ողոր...

(Այս ասուած է ի դեմս սուրբ)
Հոգւոյն:)

Վարդավառին՝

Սուրբ Աստուած. . . որ յայտնեցար ի Թափոր լերինն. ողոր. . . .

Աստուածածնի վերափոխմանը՝

Սուրբ Աստուած . . . որ եկիր
ի փոխումն մեր քոյ եւ կուսի. ողոր...

Փառաւորեալ եւ օրհնեալ միշտ
սուրբ կոյս Աստուածածին Մարիամ
մայր Քրիստոսի. մատո՛ զաղաչանս
մեր որդւոյ քոյ եւ Աստուծոյ մերոյ:

Փրկել զմեզ ի փորձութենէ եւ
յամենայն վտանգից մերոց:

—

ՄԱՆԱՍԷ ԹԱԳԱՒՈՐԻ ԱՂՕԹՔԸ:

Տէր ամենակալ Աստուած Աբրահամու, Իսահակայ, Յակովբայ եւ
եւ զաւակի նոցա արդարոց. ամենակալ Տէր՝ թող զմեզս իմ:
Որ արարեր զերկինս եւ զերկիր, եւ զամենայն զարդ նոցա. ամենակալ Տէր:
Որ կապեցեր զծով բանիւ հրամանի քո. փակեցեր զխորս, կնքեցեր
ահաւոր եւ փառաւորեալ անուամբ
քով սրբով. ամենակալ Տէր:
Որ ամենայն ինչ սարսի եւ դողայ յերեսաց ահի զօրութեան քո.
ամենակալ Տէր:

Անբաւ է մեծ վայելչութիւն վառաց սրբութեան քո. սաստիկ է բաշկութիւն սպառնալեաց քոց ի վերայ մեղաւորաց. անչափ եւ անքննին են ողորմութիւնք աւետեաց քոց. ամենակալ Տէր։

Դու Տէր բարձրեալ, գթած, երկայնամիտ, բազումողորմ. եւ զրդջանաս ի վերայ չարեաց մարդկան. ամենակալ Տէր։

Դու Աստուած՝ ոչ եդեր ապաշխարութիւն վասն արդարոցն՝ Աբրահամու, Իսահակայ եւ Յակոբայ, որք ոչ մեղան քեզ. ամենակալ Տէր։

Այլ եդեր ապաշխարութիւն վասն իմ մեղաւորիս. զի մեղայ աւելի քան զաւազ ծովու, եւ բազմացան անօրէնութիւնք իմ. ամենակալ Տէր։

Զեմ արժանի հայիլ եւ տեսանել զբարձրութիւնս երկնից՝ ի բազմութենէ անօրէնութեան իմոյ. ամենակալ Տէր։

Կորացեալ եմ ես ի բռնութենէ կապանաց երկաթից. եւ ոչ գոյ ինձ հանգիստ. ամենակալ Տէր։

Բարկացուցի զսրտմտութիւն, եւ չար առաջի քո արարի. կանգնեցի պատկեր եւ բազմացուցի զցասումն. ամենակալ Տէր։

Եւ արդ Տէր՝ խոնարհեցուցանեմ զծունր սրտի իմոյ, եւ հայցեմ ի քաղցրութենէ քումմէ. ամենակալ Տէր։

Մեղայ Տէր, մեղայ, եւ զանօրէնութիւնս իմ ես ինձէն գիտեմ. ամենակալ Տէր։

Աղաչեմ եւ խնդրեմ ի քէն՝ Թող ինձ, Տէր, Թող ինձ, եւ մի կորուսաներ զիս ըստ անօրէնութեան իմոյ. ամենակալ Տէր։

Մի յաւիտեան բարկանար ինձ Տէր, եւ մի յիշեր զչարիսն իմ. եւ մի պարտաւորեր զիս ընդ իջեալսն ի ներքոյ երկրի չարեօք. ամենակալ Տէր։

Զի դու Աստուած՝ Աստուած ապաշխարողաց ես. եւ յիս ցոյց զբարերարութիւնդ քո, որ անարժան եմ։ ամենակալ Տէր։

Կեցուցեա զիս ըստ բազում ողորմութեան քում. եւ ես օրհնեցից զքեզ զամենայն աւուրս կենաց իմոց. ամենակալ Տէր։

Զքեզ Տէր՝ օրհնեն ամենայն զուարթունք երկնից. եւ քո են փառք յաւիտեանս. ամէն։

Փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից ամէն։

Աղաչեմ եւ խնդրեմ ի քէն Տէր. Թող ինձ զմեղս իմ։

Բազումողորմ Տէր, ողորմեա՛ ինձ։

Աստուած՝ քաւեա՛ զիս զմեղաւորս ի մեղաց, եւ կեցո։

Արարիչ իմ եւ յոյս Աստուած, գթա՛ յիս ի մեղուցեալ ծառայս. եւ ողորմեա՛ ինձ բազմամեղիս։

Ամենօրհնեալ սրբուհի՝ եւ միշտ կոյս աստուածածին Մարիամ. բարեխօսեա՛ առ Տէր վասն իմ մեղաւորիս։

Ամենայն սուրբք Աստուծոյ՝ բարեխօսեցէք առ Հայր ի յերկինս վասն մեր մեղաւորացս։

Քրիստոս որդի Աստուծոյ անո-
խակալ, ընկալ զաղաչանս մեր. զի
ի քեզ են ապաւինեալ անձինք մեր։

Յաղթող զօրութեամբ՝ սուրբ
եւ կենդանարար եւ պատուական
խաչիւ քո Տէր՝ պահպանեա զմեզ։

Առաքեա Տէր զհրեշտակ խա-
ղաղութեան քո, որ եկեալ պահեսցէ
զմեզ անխռովս 'ի տուէ եւ 'ի գի-
շերի։

Եւ մարգասիրութեամբ քո յի-
շեա զմեզ Տէր՝ յիշեա զմեզ, յորժամ
գաս արքայութեամբ քո, եւ ողոր-
մեա մեզ։

Տէր ողորմեա, տէր ողորմեա,
տէր ողորմեա.

Ամի Աստուած հարցն մերոց,
Որ ապաւէնդ ես նեղելոց.
Հաս յօգնութիւն ծառայիցս քոց,
Լեր օգնական ազգիս Հայոց։
Տէր ողորմեա.

Միջնորդութեամբ սրբոյ խաչիդ
Եւ անարատ սուրբ ծնողիդ՝
Յիշեա զհեղումն արեան փրկչիդ.
Եւ 'ի խնդիր փոքու հօտիդ։
Տէր ողորմեա։

Զի գիտացաք մեք հաւաստեաւ.
Որ չափ մեղաց մերոց լցաւ,
Ուստի տէրդ մեր բարկացաւ.
Առ 'ի խրատել զմեզ զարթեաւ։
Տէր ողորմեա։

Սրդ անկանիմք առաջի քո.
Գոչեմք՝ մեղայ Տեառնդ մերոյ,
Գարձո՛ ի մէնջ զցասումն քո.
Վասն անսպառ գթութեան քո։
Տէր ողորմեա՛, տէր ողորմեա՛, տէր
ողորմեա՛։

ԵՐԵԿՈՅԵԱՆ ԱՂՕԹՔ.

Ես առ Աստուած կարդացի, եւ նա լուաւ ինձ յերեկոյս, ի վաղորդայն՝ եւ ի հասարակ աւուր։

Սպասէի Աստուծոյ իմոյ, եւ ակն ունէի կենարարին, որ փրկէ զծառայս իւր եւ կեցուցանէ։

Փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից ամէն։

Փառք քեզ Աստուած՝ փառք քեզ, յաղագս ամենայնի, Տէր, փառք քեզ։

Հասեալքս ի ժամ երեկոյիս ամենեքեան՝ անդադար փառաւորեմք զՀայր եւ զՈրդի եւ զՍուրբ Հոգիդ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս, յաւիտենից. ամէն։

Քեզ երկրպագանելով Տէր Աստուած մեր, գոհանամք զքէն յաղագս խաղաղութեամբ անցուցանելոյ ի մէնջ զերկարութիւն տուընջեանս։ Տուր մեզ Տէր՝ աղաչեմք զքեզ զերեկս եւ զառաջիկայ գիշերս առանց մեղաց, եւ առանց գայթակղութեան անցուցանել. հաստատուն կալ եւ մնալ ի հաւատ՝ ի յոյս՝ ի սէր՝ եւ ի պատուիրանապահութեան քո։ Խնդրելով զխաղաղութիւն ամենայն աշխարհի, եւ եկեղեցւոյ քում սրբոյ զհաստատութիւն, եւ անձանց մերոց զփրկութիւն։ Որպէս զի ընդունելով ի քէն զհայցուածս մեր՝ եւ զմեծ վայելչական փառաբանութիւն, միշտ ի բարձունս առաքեսցուք ամենաղօր Տէրութեանդ Քրիստոս Աստուած մեր. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Հայր գթած՝ բարեխնամով՝ արարիչ ամենայն արարածոց. ընկալ զպաղատանս ծառայից քոց ի ժամ երեկոյիս. որ առատդ ես առ ամենեսեան՝ պարգեւօք բարերարութեան քո։ Ողորմեա Տէր ամենայն աշխարհի եւ եկեղեցւոյ քում՝ սրբոյ հիւանդաց՝ վշտացելոց՝ ճանապարհորդաց՝ նաւորդաց՝ խոստովանողաց՝ ապաշխարողաց՝ եւ հոգւոցն հանգուցելոց։ Զի դու Տէր ամենակալ՝ գիտես զպէտս մեր եւ զկարիս առաւել քան զոր խնդրեմք եւ իմանամք. եւ քեզ ընդ Որդւոյ եւ ամենասրբոյ Հոգւոյդ վայելէ փառք իշխանութիւն եւ պատիւ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից ամէն։

Յոյս կենաց՝ ընդունող աղօթից՝ քաւիչ մեղաց եւ կատարիչ խնդրուածաց, Քրիստոս Աստուած մեր՝ ընկալ զպաղատանս մեր ի ժամ երեկոյիս՝ բարեխօսութեամբ սուրբ Աստուածածնիդ եւ աղաչանօք ամենայն սրբոց քոց։ Լուր մեզ Տէր եւ ողորմեա. ներեա՛, քաւեա եւ թող զմեղս մեր. արժանաւորեա՛ գոհութեամբ փառաւորել զքեզ ընդ Հօր եւ ընդ սրբոյ Հոգւոյդ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից ամէն։

Յիշեա՛ Տէր զպաշտօնեայս քո՝ զծնողսն մեր, զվարդապետս, զեղբարս, զընկերս, զկերակրիչս, զուխտաւորս, զճանապարհորդս, զհանգուցիչս, զվաստակաւորս, զիսոստովանողս, զապաշխարողս, զգերիս, զհիւանդս, զնեղեալս, զիշխանս, զչարարարս, զբարերարս, զթշնամիս, զատելիս, եւ որք պատուիրեցին մեզ հաւատով։

Յիշեա՛ Տէր եւ ողորմեա։

Բարերար եւ բազումողորմ Աստուած՝ քո անմոռաց գիտութեամբդ եւ անբաւ մարդասիրութեամբդ յիշեա՛ զամենայն հաւատացեալս ի քեզ, եւ ողորմեա ամենեցուն։ Օգնեա՛ եւ փրկեա յիւրաքանչիւր վտանգից եւ ի փորձութեանց։ Արժանաւորեա՛ գոհութեամբ փառաւորել զՀայր եւ զՈրդի եւ զսուրբ Հոգիդ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Հայր մեր որ յերկինս ես . . . .

ԱՂՕԹՔ ՀԱՆԳՍՏԵԱՆ՝ ՔՆԵԼՈՒՑ ՅԱՌԱՋ։

Տէր Աստուած մեր՝ դու պահեա զմեզ խաղաղութեամբ ի գիշերիս յայսմիկ եւ յամենայն ժամանակի։ Ընդ սուրբ երկիւղ քո բեւեռեալ պահեա զմիտս եւ զխորհուրդս մեր։ Որպէս զի յամենայն ժամ քեւ պահպանեալ լիցուք յորոգայթից թշնամւոյն։ Եւ քեզ հանցուք զօրհնութիւն եւ զփառս Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյդ սրբոյ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից ամէն։

Հրեշտակի խաղաղութեան յանձն արա զանձինս մեր, Տէր զօրութեանց, որ եկեալ պահեսցէ զմեզ անխռովս ի տուէ եւ ի գիշերի, յարթնութեան եւ ի հանգստեան մերում։ զի դու ես արարիչ լուսոյ, եւ հաստիչ գիշերի։ Եւ այժմ աղաչեմք զքեզ, Տէր Աստուած մեր, զհանգիստ գիշերիս շնորհեա խաղաղութեամբ անցուցանել, եւ հասանիլ ի պաշտօն առաւօտու յերկրպագութիւն եւ ի փառաբանութիւն ամենասուրբ Երրորդութեանդ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից ամէն։

Պահպանեա զմեզ Քրիստոս Աստուած մեր՝ ընդ հովանեաւ սուրբ եւ պատուական խաչիւդ քով ի խաղաղութեան. փրկեա՛ յերեւելի եւ յանեռեւոյթ թշնամւոյն։ Արժանաւորեա՛ գոհութեամբ փառաւորել զքեզ ընդ Հօր եւ ընդ Սրբոյ Հոգւոյդ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից ամէն։

Անկանիմք առաջի քոյ սուրբ Աստուածածին, եւ աղաչեմք զանարատ զկոյսդ՝ բարեխօսեա՛ վասն անձանց մերոց, եւ աղաչեա զմիածին Որդիդ, փրկել զմեզ ի փորձութենէ եւ յամենայն վտանգից մերոց։

Ընկալ Տէր՝ զաղաչանս մեր՝ բարեխօսութեամբ սուրբ Աստուածածնին՝ անարատ ծնողի միածնի որդւոյ քո. եւ աղաչանօք ամենայն սրբոց քոց (եւ որոց այսօր է յիշատակ։) Լուր մեզ Տէր. եւ ողորմեա. ներեա՛, քաւեա՛ եւ թո՛ղ զմեղս մեր։ Արժանաւորեա՛ գոհութեամբ փառաւորել զքեզ ընդ Որդւոյ եւ ընդ սրբոյ Հոգւոյդ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Հա՛յր մեր որ յերկինս ես. . .

ԱՂՕԹՔ ԱՄԵՆԱՏԵՍԱԿ ԳՈՐԾ ՍԿՍԵԼՈՒՑ ՅԱՌԱՋ.

Զգործս ձեռաց մերոց ուղիղ արա ի մեզ, Տէր, եւ զգործս ձեռաց մերոց յաջողեա՛ մեզ։

ԱՂՕԹՔ ՃԱՇԵԼՈՒՑ ԵՒ ԸՆԹՐԵԼՈՒՑ ՅԱՌԱՋ

Աչք ամենեցուն 'ի քեզ, Տէր, յուսան եւ դու տաս կերակուր նոցա 'ի ժամու։ Բանաս զձեռն քո եւ լցուցանես զամենեսեան քաղցրութեամբ կամՀք քովք։

—

Ճաշակեսցուք խաղաղութեամբ, որ պատրաստեալ է մեզ 'ի Տեառնէ, օրհնեալ է տէր ի պարգեւս իւր։ ամէն։

ԱՂՕԹՔ ՃԱՇԵԼՈՒՑ ԵՒ ԸՆԹՐԵԼՈՒՑ ՅԵՏՈՅ։

Գոհանամք զքէն, Տէր, որ յաւգեցուցեր զմեզ յերկրաւոր բարութեանց քոց, մի՛ զրկեր զմեզ եւ յերկնային ողորմութենէդ քումմէ։

Զլիութիւն սեղանոյս անհատ եւ աննուազ արասցէ Քրիստոս Աստուած մեր, որ զմեզ կերակրեաց եւ լիացոյց, նմա փառք եւ գոհութիւն յաւիտեանս. ամէն։

ԱՂՕԹՔ ԹԱԳԱՒՈՐԻ ՀԱՄԱՐ.

Այժենազօր Աստուած եւ թագաւոր յաւիտենից, որ ի պատկեր քո երկնաւոր եւ աներեւոյթ թագաւորութեան հաստատեցեր յերկրի թագաւոր ԶԱԼԷՔՍԱՆԴՐ ԱԼԷՔՍԱՆԴՐՈՎԻՉՆ 'ի կառավարել եւ 'ի պահպանել զքո ժողովուրդ, պահեա զսա անսասան եւ անպարտելի։

Աղբիւր կենաց եւ պարգեւիչ խաղաղութեան եւ զօրացուցիչ քոյոց ծառայից, յաւել զկեանս խաղաղական ի քէն պսակեցեալ արքայիս մերոյ ԱԼԷՔՍԱՆԴՐ ԱԼԷՔՍԱՆԴՐՈՎՉԻ, եւ զօրացո՛ ի թշնամեաց պատերազմի՝ ի փառս անուանդ եւ

ի պայծառութիւն եկեղեցւոյ քում՝ որբոյ, յորում փառաւորի անդադար տերութիւնդ քո։

ԱՂՕԹՔ ԾՆՈՂԱՑ ԵՒ ԱՄԵՆԱՅՆ ՄԵՐԳԱՒՈՐԱՑ ՀԱՄԱՐ.

Յիշեա Տէր զպաշտօնեայս քո...

ԱՂՕԹՔ ՆՆՁԵՑԵԼՈՅ ՀԱՄԱՐ.

Հոգւոցն հանգուցելոց Քրիստոս Աստուած՝ արա՛ հանգիստ եւ ողորմութիւն. եւ մեզ մեղաւորացս շնորհեա՛ զթողութիւն յանցանաց։

Քրիստոս Որդի Աստուծոյ անոխակալ եւ բարեգութ՝ գթա՛ քո ապարաչական սիրովդ ի հոգիս հանգուցեալ ծառայիդ քոց։ Յիշեա՛ յաւուր մեծի գալստեան արքայութեան քո։

Արա՛ արժանի ողորմութեան, քաւութեան եւ թողութեան մեղաց։

Դասաւորեալ պայծառացո՛ ընդ սուրբս քո յաջակողման դասուն։ Զի դու ես Տէր եւ արարիչ ամենեցուն. դատաւոր կենդանեաց եւ մեռելոց։

Եւ քեզ վայել է փառք իշխանութիւն եւ պատիւ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ԱՂՕԹՔ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՅԱՌԱՋ.

Յիսուս փրկիչ, դու որ քո անձդ զոհեցիր մեր փրկութեան համար եւ պատուիրեցիր մեզ մեր կեանքն եւս չընայել մեր եղբայրների եւ մերձաւորների համար, դիմում եմ քեզ ուրախ սրտով եւ աղաչում եմ՝ կարողութիւն տուր ինձ կատարել քո սրբ կամքը եւ զոհել իմ կեանքը մեր տէր ԹԱԳԱՒՈՐԻ եւ հայրենեաց համար։

Այժ տուր, Տէր, իմ բազկիս քաջութեամբ դիմադրել թշնամւոյն, զօրացրո՛ ինձ ճշմարիտ հաւատով եւ հաստատուն յուսով՝ աներկիւղ գնալ դէպի մահ եւ արհամարհելով այս անցաւոր կեանքը, արժանի լինել քո երկնային եւ յաւիտենական փառացն. ամէն։

ՀԱՆԴԻՍԱՒՈՐ ՕՐԵՐԻ ԺԱՄԱ-ՄՈՒՏՆԵՐԸ.

Կիւրակէի

Միածին Որդի եւ Բանդ Աստուած եւ անմահ էութիւն, որ յանձն առեր մարմնանալ ի սրբուհւոյ Աստուածածնէն եւ ի միշտ կուսէն. անփոփոխելիդ մարդ եղեալ խաչեցար Քրիստոս Աստուած մեր, մահուամբ զմահ կոխեցեր մինդ ի սրբոյ Երրորդութենէն՝ փառաւորակից ընդ Հօր եւ սրբոյ Հոգւոյն՝ կեցո զմեզ։

Ծննդեան

Աստուածածին անհարսնացեալ՝ զբանն անակիզն յղացար եւ զԱստուածն անիմանալի ծնար. զանպարագրելին ի գիրկս քո բարձեր. նմա անդադար բարեխօսեա՛ վասն անձանց մերոց։

Տեառնընդառաջի

Անսկզբնական Բանդ Աստուած, ի վերջին աւուրս յանձն առեր լինիլ մարդ ի կուսէն. եւ արարիչդ յափտենից՝ փակեցար ընդ ժամանակաւ. սուրբ Տէր սրբութեանց եւ անկարօտ մաքրութեանց, եկիր ի տաճարն քառասնօրեայ, զօրինացն կատարեցեր զարդարութիւն։ Զոր բարձեալ Սիմէօնի զանպարագրելիդ ի

գիրկս իւր, հայցէր՝ որ արձակիչգ ես կապելոց՝ արձակեա՛ զիս ի խաղաղութիւն։ Վասն որոյ՝ ընդ Ծերունւոյն Սիմէօնի վերագոչեմք առ քեզ Տէր, սուրբ՝ սուրբ՝ սուրբ՝ Տէր զօրութեանց, լի են երկինք եւ երկիր փառօք քովք ի փրկութիւն մեզ Քրիստոս Աստուած, փառք քեզ։

Ծաղկազարդի

Ցնծա՛, Երուսաղէմ, եւ զարդարեա՛ զառագաստ քո, Սիօն. քանզի ահա՛ թագաւոր քո Քրիստոսն ընտեալ ի յաւանակի նորոյ, հեզութիւն ցուցանելով, գայ մտանէ յառագաստ քո։ Եւ մեք ազաղակեմք. ովսաննա՛, օրհնեալ եկեալ ի յանուն Տեառն. որ ունի զմեծ զողորմութիւն։

Զատկի

Քրիստոս յարեաւ ի մեռելոց. մահուամբ զմահ կոխեաց. եւ յարութեամբն իւրով մեզ զկեանս պարգեւեաց. նմա փառք յաւիտեանս. ամէն։

Համբարձման

Հիացան վերնական բազմութիւնքն, տեսանելով զքեզ ի հրեղէն կառս բազմեալ, սարսեալ ասէին. ո՞վ է սա, որ գիմեալ գայ յԵդովմայ. եւ եկեալ մտանէ փառօք ի փառս. Տէր, փառք քեզ։

Հոգեգալստեան

Աստուած զքեզ խոստովանիմք զսուրբ Հոգիդ եւ երկիրպագանեմք.

որ ես պատճառ կենդանութեան եղելոցս եւ խաղաղարար աշխարհի. որ զտգիտութիւն աշակերտացն բազում գիտութեամբ լցեր եւ ի հրեղէն լեզուս բաժանեալ անճառելեօք ցուցար նոցա. աղաղակեմք՝ Տէր, խնայեա՛ եւ կեցո զմեզ։

Վարդավառի

Երեւի Տէրդ այսօր աշակերտացն ի Թափորական լերինն. եւ աշակերտացդ զարհուրեալ աղաղակէին ասելով. արասցուք երիս տաղաւարս՝ մի Տեառնդ, եւ մի Մովսէսի եւ մի Եղիայի։ Սրդ՝ եւ մեք բանաւոր հօտքս երգեմք ընդ քո ճշմարիտ վկայիցդ. առաքեա՛ ի մեզ զլոյս քո շնորհացդ ի քոյ միւսանգամ գալստեանդ եւ կեցո՛։

Խաչի

Առաջի պատուական ամենայաղթ խաչի քոյ անկանիմք երկրպագելով եւ խնդրեմք զթողութիւն յանցանաց մերոց. քանզի սու

բարձեր զդատապարտութիւն աղգի մարդկան։ Եւ այժմ վասն սրբոյ աստուածային քոյ նշանի շնորհեա՛ զերկնային զխաղաղութիւնդ ամենայն աշխարհի։

Էջմիածնի

Տէր մեր եւ փրկիչ Յիսուս Քրիստոս, որ ազօթիւք եւ միջնորդութեամբ բազմաչարչար վկային քո եւ Հօրն մերոյ սրբոյն Գրիգորի Լուսաւորչին, մեծաւ փառօք եւ բազմութեամբ զօրացդ լուսեղինաց իջեր

յերկնից ի դաշտն արարատեան՝ ի յայցելութիւն փոքու հօտիդ քոյ՝ ազգիս Հայոց՝ եւ ի ցուցումն յառաջական սիրոյդ եւ մեծի ողորմութեանդ, եւ ոսկէ ուռամբ բաղխեցեր զխորս անդնդոց, եւ հալածեցեր զգունդս սանդարամետականաց, ուր եւ լուսաձեւ յօրինմամբ հրաշակերտեցեր զմայր Աթոռն մեր զսուրբ Էջմիածին. եւ արարեր զնա շտեմարան անսպառելի շնորհացդ աստուածայնոց՝ ի լինիլ ծնող՝ դաստիարակ եւ կատարելագործիչ ամենայն եկեղեցեացս Հայաստանեայց։ Արդ՝ պահեա՛ զնա անարատ, հաստատուն եւ անաղօտ, ի պայծառազարդութիւն եկեղեցեացս մերոց եւ մանկանցս սոցին մինչեւ ի կատարած աշխարհի. յորոց միշտ փառաւորի ամենասուրբ

անուն քո յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Եկեղեցւոյ

Զխաղաղութիւն շնորհեա՛ եկեղեցւոյ քում սրբոյ, զխաղաղութիւն եւ զանշարժութիւն ի թշնամեաց պատերազմէ. եւ հաստատեա՛ ի մի հաւատ զկաթուղիկէ եկեղեցի. զքեզ խոստովանիմք Տէր եւ Աստուած, կեցո՛ զմեզ։

Լուսաւորչի

Գրիգոր սո՛ւրբ քահանայապետ՝ որ զհաւատս ուսուցեր եւ զբանակս դիւաց հալածեցեր. մարդկան ուսուցեր քարոզել զԵրրորութիւն, պսակե-

ցար յարքայութեանն. արդ բարեխօս լեր առ Տէր վասն մեր։

Վարդանանց

Յաշխարհական ի ճակատամարտին, յաշխարհական ի ճակատամարտին եւ ի մեծ պատերազմին ընդդիմամարտեալ լինէր անօրինացն պատերազմ։ Իսկ երանելի նահատակքն զմոլութիւն անօրինացն խափանեցին եւ յաղթող գտան. քանզի՝ որոց ստացեալ էր զաստուածային զօրութիւն, ոչ ժուժկալէր նոցա մարմնաւորական պատերազմ։ Արդ՝ Քրիստոս Աստուած՝ սոցա բարեխօսութեամբն խնայեա ի մեզ եւ ողորմեա։

Հրեշտակաց

Զոր օրհնեն անլռելի ձայնիւ իմանալի զօրութիւնք՝ երկնաւոր նահապետութիւնք, հրեշտակք եւ հրեշտակապետք. աթոռք եւ տէրութիւնք. իշխանութիւնք եւ պետութիւնք. սերովբէք եւ քերովբէք, եւ մեք օրհնեսցուք զնոյն ամենասուրբ Երրորդութիւնն եւ զմի Աստուածութիւնն։

Ամենայն սրբոց

Բարեխօսութեամբ սրբուհւոյ Աստուածածնին, սրբոյն Յովհաննու կարապետին, սրբոյն Ստեփաննոսի նախավկային, եւ սրբոյն Գրիգորի մերոյ լուսաւորչին. եւ սրբոց առա-

քելոց եւ մարգարէից. հայրապետաց եւ վարդապետաց. մարտիրոսաց եւ թագաւորաց, ճգնաւորաց եւ կուսանաց, նահապետաց եւ միանձանց, եւ ամենայն սրբոց քոց՝ հնոց եւ նորոց. յայտից եւ անյայտից, որոց այսօր է յիշատակ. զխաղաղութիւն եւ զերկնային ողորմութիւն քո պարգեւեա՛ մեզ մարդասէր Տէր։

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм. ССР
Ա. Մասիսյան
Ա. ՄԱՍԻՍՅԱՆԻ ՍԵՎԱՆ

2013

2001

ՀՀ Ազգային գրադարան

NL0029318